ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վրդովմունքով տեղեկացանք, որ Թուրքիայի իշխանությունների արտոնությամբ հոկտեմբերի 1-ին «Ազգայնական շարժում» կուսակցության կողմից նամազ է կազմակերպվել Անիի հայոց Սուրբ Աստվածածին Մայր տաճարում:

Սույն քայլը քաղաքական սադրանք է եւ որեւէ առնչություն չունի հոգեւոր-բարեպաշտական զգացումների եւ կրոնական ազատության ու իրավունքների հետ: Միաժամանակ դա փորձ է ժխտելու հայկական պատկանելությունը Անիի Մայր տաճարի, որ աղոթազրկվել է հայոց ցեղասպանության հետեւանքով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է այսօրինակ գործողությունները, որոնք սերմանում են անհանդուրժողություն եւ հայատյացություն: Բացարձակապես անընդունելի է նաեւ քրիստոնեական սրբավայրի փրամադրումը նամազի համար՝ այն դեպքում, երբ հետեւողականորեն արգելվում է քրիստոնեական ժառանգության իրավատերերին պաշտամունք մատուցել իրենց իսկ տաճարներում: Այսպիսով, թուրքական իշխանությունները շարունակում են իրենց քայլերը՝ ուղղված հայկական հիշատակների ոչնչացմանը եւ հայոց պատմական սրբավայրերի ու մշակութային արժեքների յուրացմանը:

Ակնհայտ է նաեւ, որ սույն քայլով Թուրքիան վերստին ի դերեւ է հանում Հայաստանի եւ միջազգային հանրության ջանքերը՝ ի նպաստ հայ-թուրքական երկխոսության հաստատման եւ հարաբերությունների կարգավորման:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում իր լիազորություններն ավարտած Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Սերժ Սմեսովին:

Նորին Սրբությունը, շնորհակալություն հայտնելով դեսպանին Հայաստանում չորսամյա գործունեության համար, իր բարեմաղթանքները հղեց նրան՝ հայցելով Աստծո օրհնությունն ու օգնականությունը: Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ ձեւավորված բարեկամությունը կշարունակվի, ինչին իրենց կարեւոր նպաստն են բերում նաեւ դեսպանները:

Իր հերթին, պարոն Սմեսովը նշեց, որ անմոռանալի տպավորություններով է հեռանում Հայաստանից: